ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«28» 06 2016
N 33-Հ կ ν.12/16 04
օր.N 2

«28» 06 2016
N
օր. N

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-Ն Գ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով՝ ֆինանսների նախարարությանը կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:
2. Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2016թ. ապրիլի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) Ծառայությունների որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2) Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,

3) ՀՀ ֆինանսների նախարարությունում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,

4) Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,

5) Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ ֆինանսների նախարարությունը չի կատարում Ծառայությունների դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 4-րդ կետի 4) և 5) ենթակետերի:

4. ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,

2) Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,

3) Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

4) Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 22.09.2011թ. N1500-Ն Գ որոշման: Վճարումները կատարվում են դրամով՝ հետևյալ կերպ.

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական քաղաքային կապ	Ազդանշանային հարմարանք	Ընդամենը
1.	ՀՀ ֆինանսների նախարարի աշխատասենյակ	1 x 225 000		225 000
2.	ՀՀ ֆինանսների նախարարի ընդունարան		10 000	10 000
3.	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի աշխատասենյակ	1 x 225 000		225 000
4.	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի ընդունարան		10 000	10 000
5.	կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	2 x 100 000		200 000
6.	ընդամենը տարեկան վարձը			670 000
7.				վեց հարյուր յոթանասուն հազար դրամ

5)Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ամեն ամիս,

6) Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

7) ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

5. Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության առ 10.07.2015թ.N29-Ա և ՀՀ Ֆինանսների նախարարության առ 17.07.2015թ.N491-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____ Գ. Կուտոյան

ՀՀ ֆինանսների նախարար

_____ Գ.Խաչատրյան

ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱԱԾ
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հ/հ 90001830[illegible]
հվհհ 01507079

Կ.Տ.

ք.Երևան, Մելիք-Ադամյան 1

Կ.Տ.

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն _____ հեռախոս՝1-99